կանք առնուլ զիլամն 'ի Դատաւորէն, բայց նա յամառեալ 'ի բանս իւր ոչ զիջանէր 'ի խնդիր նոցա, թեւակից ունելով ինքեան զնախիպն։ Բդեշխն և Յովհաննէս վարդապետ սոիպէին 'ի Դամասկոսէ առնուլ զայն գիր, զի հրովարտակն ուղղեալ էր միայն առ Դատաւորն, և այլազգիք 'ի մէջ մտեալ յորդորէին զՆորհրդականս շահել զմիտս Դատաւորին, զի եթէ 'ի ծախուց միոյ իլամի այսքան խորշիք ասեն, զի՞ գործէք յառնել պարտատերաց և բողոքել առ Դատաւորն, մանաւանդ զերծ մնայք 'ի տոկոսից մինչեւ ցամս 8· իսկ եթէ ոչ անսայք բանից մերոց, գրեմք 'ի Դուռն և ծանուցանեմք թէ Հայք ոչ միայն չունին այդքան պարտս, այլ նա և մթերեալ գանձս ոսկւոյ և արծաթոյ և ականց պատուականաց 'ի փակեալ Պատրիարքարանն· յայնժամ լինի յետինն չար քան զառաջինն։ Ապա միջնորդութեամբ Դպրապետին հաճեցուցին զԴատաւորն՝ տալով նմա 27,500 դահեկան, և այլազգեաց 15,000, թող զԲաղաքապետն և զնախիպն, և առին զիլամն, և յետ այնմ՝ խորհրդով Դպրապետին գրեցին Հայք առ Դենպետն մեծ 'ի Կոստանդինուպոլիս, թէ չէր արժան Դատաւորին վասն միոյ թղթոյ առնուլ զայսքան դրամս յայսպիսի տարակուսելի նեղութեան մերում· զայսոսիկ գրեանս առաքեցին 'ի ձեռն միաբանի ուրուք 'ի Դամասկոս առ Յովհաննէս վարդապետ տանել 'ի Կոստանդինուպոլիս։

ԳԼՈՒԽ ԽԸ·

Ապստամբութիւն Գիւղականաց Բեթզեհէմի։ Գաբրիէլ պատրիարք առաքի 'ի Զմիւռնի։ Հրովարտակ վասն պարտուց։ Պարտատերաց, Նեղութիւն Խորհրդականաց, հասանիլ Պօղոս եպիսկոպոսի Յերուսաղէմ։ Անլազգիք քաղաքին։ Սկիզբն վճարման պարտուց։

ԱՌԻՍԱԿԱՆ Դամասկոսի նախ քան զմեկնիլ իւր Յերուսաղէմէ՝ սահմանեալ էր հարկս Բեթզեհէմ գիւղի 45 քսակս արծաթոյ, եւ կոչեալ առ ինքն զՔաղաքապետն պատուիրեաց նմա առաջի գլխաւորաց վանօրէից, առնուլ